




# ԵՄ առևտրային քաղաքականությունը

Նորայր Դանիելյան



## Վաղ տարիները

- Առաջին քայլերից մեկը տարիֆային միության ստեղծումն էր, որպեսզի հնարավոր լիներ վերացնել բոլոր մաքսատուրքերը Անդամ Պետությունների միջև առևտրի վրա:

## Մաքսային միության ներքին և արտաքին ասպեկտները

- Ապրանքների ազատ շրջանառությունը Եվրոպական Միության ներսում Մաքսային միության ներքին ասպեկտն է,
- Ընդհանուր մաքսային տարիֆը հանդիսանում է արտաքին ասպեկտը: Այն վերաբերում է Մաքսային միության արտաքին սահմաններով ներմուծվող ապրանքներին:



## ԵՄ առևտրային քաղաքականությունը

- Աշխարհում ապրանքների և ծառայությունների արտահանումների ու ներկրումների իր մոտ 20% մասնաբաժնով Եվրոպական Միությունը հանդիսանում միջազգային առևտրի հիմնական դերակատարներից մեկը:

## ԵՄ առևտրային քաղաքականությունը

- ԵՄ առևտրային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը շուկաների բացումն է եվրոպական արտահանումների համար, բազմակողմանի, երկկողմանի և ռեգիոնալ առևտրային պայմանագրերի միջոցով
- Եվրոպական հանձնաժողովը՝ Եվրոպական Միության գործադիր մարմինը ներկայացնում է բոլոր (մեծ թե փոքր) անդամ պետությունների շահերը այլ պետությունների և տնտեսական խմբավորումների հետ առևտրային բանակցություններում:
- Եվրահանձնաժողովը նաև հանդես գալիս նրանց անունից միջազգային առևտրի միակ համաշխարհային ֆորումում, որը Համաշխարհային առևտրի կազմակերպությունն է և գտնվում է Ժնևում ունենալով 148 անդամ պետություն:

### Եվրոպական Միությունը համաշխարհային առևտրում ԵՄ արտահանումների և ներկրումների 10 հիմնական գործընկեր երկրները (2008)

export		import	
1. USA	16%	1. China	19%
2. Russia	12%	2. USA	8%
3. Switzerland	11%	3. Russia	8%
4. China	6%	4. Norway	6%
5. Turkey	5%	5. Switzerland	4%
6. Norway	5%	6. Japan	3%
7. Japan	3%	7. Turkey	3%
8. United Arab Emirates	3%	8. Korea	2%
9. India	2%	9. Brazil	2%
10. Brazil	2%	10. Libya	2%

### «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» (GSP/GSP+)

- Համակարգի հիմնական նպատակն է նպաստել աղքատության նվազեցմանը և խրախուսել կայուն զարգացումը և արդյունավետ կառավարումը:
- GSP ստանդարտը արտոնություններ է ընձեռում շուրջ 176 զարգացող պետությունների մոտ 6400 անուն ապրանքատեսակներ ԵՄ շուկա արտահանել զրոյական կամ զգալիորեն նվազեցված մաքսատուրքերով
- GSP+ առաջարկում է մաքսատուրքերի լրացուցիչ նվազեցում աջակցելու զարգացող խոցելի պետություններին այս ոլորտում միջազգային համաձայնագրերի ռատիֆիկացման և իրականացման գործում

### «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» (GSP/GSP+)

- GSP+ համակարգին, մեր տարածաշրջանի 3 երկրներից բացի, անդամակցում են լատինաամերիկյան և արևելյան Ասիայի մի քանի երկրներ՝ թվով 16, որոնք համարվում են զարգացող երկրներ
- 2009թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունը «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» մասնակից է:

## ԵՄ առևտրային քաղաքականությունը և զարգացող պետությունները

- Առևտրային քաղաքականությունը նաև մեծ կարևորություն ունի Եվրոպական Միության հարաբերություններում զարգացող պետությունների հետ: Մասնավորապես Աֆրիկյան պետությունները, Կարիբյան և Խաղաղ օվկիանոսի երկրները Կոտոնուի համաձայնագրով ԵՄ շուկա մուտք գործելու արտոնյալ իրավունք ունեն:

